Տեղեկանք

Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունիսի 9-ի N171-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից 2021 թվականին կատարված ուսունասիրությունների վերաբերյալ

Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունիսի 9-ի N171-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը, 2021 թվականի մայիսի 31-ից մինչև հուլիսի 28-ը և օգոստոսի 31-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ իրականացրել է Արարատյան դաշտի 176 համայնքում ստորերկրյա ջրային ռեսուրսների փաստացի վիճակի, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվություններով տրված պայմանների կատարման ուսումնասիրություն, ինչի արդյունքում պարզվել է հետևյալը.

1. 176 համայնքից խորքային հորեր առկա են 146-ում՝ Արարատի մարզում 65, իսկ Արմավիրի մարզում 81 համայնք: Խորքային հորերի քանակը կազմում է 1873 (ընդհանուր 1873 հորերից 1217-ը՝ շահագործվող), որից 780-ը Արարտի (522-ը՝ շահագործվող), իսկ 1093-ը Արամավիրի մարզերում (695-ը՝ շահագործվող),
    - 1873 խորքային հորից՝ 317-ը ինքնաթափ է, 900-ի վրա առկա է պոմպ, չի շահագործվում 490-ը (չշահագործվող հորերի վերաբերյալ առաջարկությունը ներկայացված է կից Հավելված N 1-ի 2-րդ կետով), 53-ը հողով կամ քարերով լցված են (Նշված հորերի վերաբերյալ առաջարկությունը ներկայացված է կից Հավելված N 1-ի 2.1 կետով), 20-ը ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի դիտակետեր են, 81-ը կոնսերվացված են, իսկ 12-ը ենթակա է կոնսերվացման կամ լուծարման՝ 8-ը կոնսերվացում, 4-ը լուծարում (Նշված հորերի վերաբերյալ առաջարկությունը ներկայացված է կից Հավելված N 1-ի 3-րդ կետով):
    - 1873 խորքային հորից՝ 77-ի վրա առկա է ջրաչափ (բացակայում է 1796), իսկ 331-ի վրա՝ փական:
    - 991 խորքային հոր շահագործվում է ոռոգման նպատակով, իսկ 205-ը՝ խմելու կենցաղային, 8-ը՝ արդյունաբերական, 13-ը՝ ձկնաբուծական:
    - ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառը կազմում է **7849.38** լ/վ, իսկ փաստացի ընդհանուր ջրառը՝ **24264.95** լ/վ:

      Նշվածից երևում է, որ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից **ավել է օգտագործվել 16415.57** լ/վ, (Խնդրի լուծման վերաբերյալ առաջարկությունը ներկայացված է Հավելվածի N 1-ի 4-րդ կետով):

2. 1873 հորերից ջրօգտագործման թույլտվություն տրվել է 510 խորքային հորի շահագործման համար, որից 188-ը Արարատի, իսկ 322-ը՝ Արմավիրի մարզերում:
    - ջրօգտագործման թույլտվություն ունեցող խորքային հորերից պոմպով շահագործվում է 447-ը, իսկ ինքնաթափ է 37-ը, չի շահագործվում 26-ը (առաջարկություն՝ Հավելվածի N 1-ի 2-րդ կետով):
    - 510 խորքային հորերի վրա առկա է 50 ջրաչափ և 105 փական:
    - Ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառը կազմում է **7849.38** լ/վ, իսկ ջրօգտագործման թույլտվություն ունեցող խորքային հորերից փաստացի ջրառը՝ **13754.15** լ/վ:

      Նշվածից երևում է, որ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից **ավել է օգտագործվել 5904.77** լ/վ (առաջարկություն՝ Հավելվածի N 1-ի 4-րդ կետով):
3. Շահագործվող խորքային հորերի քանակը 1217 է, որից ինքնաթափ է 317-ը, իսկ պոմպով շահագործվում է 900-ը:
    - 1217 խորքային հորից ջրօգտագործման թույլտվություն տրվել է 484 խորքային հորի շահագործման համար:
    - Խորքային հորերի վրա առկ է 71 ջրաչափ և 302 փական:
    - Ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառը կազմում է **7583.57** լ/վ, իսկ փաստացի ընդհանուր ջրառը՝ **24134.75** լ/վ:

      Նշվածից երևում է, որ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից **ավել է օգտագործվել 16551.18** լ/վ: (առաջարկություն՝ Հավելվածի N 1-ի 1-ին կետով):
4. ՋՕԸ-երի կողմից շահագործվում է 412 խորքային հոր 80 համայնքում, որոնցից բոլորը շահագործվում են պոմպերով,:
    - 412 խորքային հորից ջրօգտագործման թույլտվություն տրվել է 298-ի շահագործման համար:
    - Խորքային հորերի վրա առկա է 7 ջրաչափ և 54 փական:
    - ՋՕԸ-երին ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառը կազմում է **6262.06** լ/վ, իսկ փաստացի ջրառը՝ **12813.7** լ/վ:

      Նշվածից երևում է, որ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից **ավել է օգտագործվել 6551,64** լ/վ:

Հարկ է նշել, որ ուսումնասիրության ընթացքում պոմպով շահագործվող 900 խորքային հորերի մեծ մասից փաստացի ջրաելքի չափում հնարավոր չի եղել իրականացնել, քանի որ այդ պահին ջրառ չի կատարվել, իսկ ջրառն իրականացվում է ընդհատվող ռեժիմով և ըստ պահանջի: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ որպես փաստացի ջրառի արժեք վերցվել է պոմպի

առավելագույն հզորությունը, ինչը հետագա հաշվարկներում պետք է հաշվի առնել:

Խորքային հորերի կոնսերվացում կամ լուծարում կատարվում է Ջրային օրենսգրքի համաձայն, իսկ անհրաժեշտ գումարի չափը հաշվարկվում է կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 1233-Ն որոշմամբ սահմանված կարգով (տե՛ս կից Հավելված N 1-ով):

Ուշադրության է արժանի այն փաստը, որ շահագործվող 1217 խորքային հորից իրականացվում է **16551.18** լ/վ ապօրինի ջրառ, ինչը ՋՕԸ-երի և համայնքների կողմից առանց ջրօգտագործման թույլտվության ջրառ իրականացնելու արդյունք է:

Խորքային հորերը փականներով և ջրաչափերով կահավորման համար խոչընդոտ է համայնքային բյուջեներում անբավար ֆինանսական միջոցները: Քանի որ խորքային հորերը համայնքային պատկանելության են, ապա դրանց հետագա շահագործման նպատակահարմարության և ներդրումների չափի որոշման համար պետք է լրացուցիչ աշխատանք իրականացվի համայնքների հետ համատեղ:

Ուսումնասիրությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է կից աղյուսակներում:

Տեղեկանքին կից հավելվածում ներկայացվում է ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները:

Հավելված N 1

Առաջարկություններ

<u>Ա. Շահագործվող խորքային հորեր</u>

1. 1217 շահագործվող խորքային հորից՝

- ջրօգտագործման թույլտվություն տրվել է 484-ի շահագործման համար, որը կազմում է շահագործվող խորքային հորերի 39,8 %-ը,
- խորքային հորերի վրա առկա է 71 ջրաչափ, ինչը կազմում է շահագործվող խորքային հորերի 5,8 %-ը,
- խորքային հորերի վրա առկա է 302 փական, ինչը կազմում է շահագործվող խորքային հորերի 24,8 %-ը:

Հաշվի առնելով վերոնշյալ ցուցանիշները՝ առաջարկում ենք շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակել աշխատանքային քարտեզ մինչև 2030 թվականը, ինչի հիման վրա համայնքներում փուլ առ փուլ կիրականացվեն աշխատանքներ խորքային հորերի շահագործման համար ջրօգտագործման թույլտվությունների ստացման, ինչպես նաև խորքային հորերը փականներով և ջրաչափերով կահավորման համար: Արդյունքում՝ նախատեսել, որ մինչև 2030թ Արարատյան դաշտավայրում չպետք է շահագործվեն ապօրինի խորքային հորեր:
Վերոնշյալ աշխատանքներն անհրաժեշտության դեպքում իրականացնել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, մարզպետարանների և համապատասխան հայանքապետարանների աջակցությամբ:

<u>Բ. Չշահագործվող խորքային հորեր</u>

2. Աղյուսակ 1-ում նշվում է, որ 490 խորքային հոր չի շահագործվում, իսկ աղյուսակ 2-ում նշվում է, որ չշահագործվող խորքային հորերից 26-ն ունեն ջրօգտագործման թույլտվություններ: Սույնից հետևում է որ անհրաժեշտ է պարզել՝ նշված 26 խորքային հորերից, որոնք չեն շահագործվել 3 տարուց ավել, իսկ որոնք՝ 3 տարուց պակաս:
Առաջարկում ենք համայնքների հետ համատեղ լրացուցիչ հստակեցնել վերոնշյալ խորքային հորերի, ինչպես նաև մնացած 464 չշահագործվող խորքային հորերի հետագա շահագործման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով օրենսդրության պահանջները:

2.1. 53 խորքային հոր հողով կամ քարերով լցված է, որոնք համաձայն Ջրային օրենսգրքի 37.2 հոդվածի ենթակա են լուծարման, իսկ համաձայն կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 1233-Ն որոշմամբ սահմանված կարգի մեկ հորի լուծարման համար անհրաժեշտ է 2466,99 հազ ՀՀ դրամ, հետևաբար 53 խորքային հորի լուծարման համար կպահանջվի մետավերապես 130538,47 հազ ՀՀ դրամ: Սույն հարցի մասով համայնքների կողմից կարող է ներկայացվել այլ լուծումներ վերոնշյալ խորքային հորերի հետագա շահագործման գործընթացի կազմակերպման վերաբերյալ (լուծարման կամ կոնսերվացման համար անհրաժեշտ գումարի չափը կարող է փոփոխության ենթարկվել կապված շինանյութերի շուկայում գների փոփոխության հետ՝ համեմատած 2013 թվականի հետ):

3. 12 (8-ը կոնսերվացում, 4-ը լուծարում) խորքային հորերի կոնսերվացման կամ լուծարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 5-րդ աղյուսակում, որի համար համաձայն կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 1233-Ն որոշմամբ սահմանված կարգի անհրաժեշտ է 11169.36 հազ ՀՀ դրամ:

4. Ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառը կազմում է 7849.38 լ/վ:

- Փաստացի ընդհանուր ջրառը կազմում է 24264.95 լ/վ, որը 16415.57 լ/վ-ով ավել է ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից:
- Ջրօգտագործման թույլտվություն ունեցող խորքային հորերից փաստացի ջրառը կազմում է 13754.15 լ/վ, որը 5904.77 լ/վ-ով ավել է ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառից:

Վերոնշյալից հետևում է, որ 16415.57 լ/վ ավել ջրառից 5904.77 լ/վ ջրառն իրականացվել է ջրօգտագործման թույլտվություն ունեցող խորքային հորերից, որը համարվում է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրառից ավել ջրառ, իսկ մնացած 10510,8 լ/վ ջրառն՝ ապօրինի ջրառ:

Առաջարկում ենք դիմել Բնապահապանության և ընդերքի տեսչական մարմնին խնդրին հետագա լուծում տալու նպատակով (ուսումնասիրության աշխատանքներին մասնակցել են նաև Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները):